ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» փետրվարի 2015թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԲԱԲԿԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն անվանի պատմաբան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Բաբկեն Հարությունյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Չարենցի փողոց h.4 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԲԱԲԿԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Անվանի պատմաբան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Բաբկեն Հարությունյանը ծնվել է 1941թ. Երևանում։

1958թ. ոսկե մեդալով ավարտել է Երևանի Հր. Աճառյանի անվան թիվ 72 միջնակարգ դպրոցը, 1962թ. գերազանցության դիպլոմով՝ Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը։

1963-1966 թթ. ուսանել է նույն բուհի ասպիրանտուրայում։

1968թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Վայոց ձորը հնագույն ժամանակներից մինչև 1045 թվականը» խորագրով։

1972-1977 թթ. գիտամանկավարժական գործունեությանը զուգահեռ՝ սովորել և գերազանցությամբ ավարտել է նաև ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի հեռակա բաժինը։ Տարիների գիտահետազոտական տքնաջան պրպտումների արգասիք «Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի (արևմտյան և հարավային աշխարհներ)» դոկտորական ատենախոսությունը պաշտպանել է 1993թ.։

2005թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում, 2006թ. ընտրվել է ՀՀ ԳԱ ակադեմիայի թղթակից անդամ։ 1969-2013թթ. դասավանդել է Երևանի պետական համալսարանում, 1993-1994թթ. դասախոսել է նաև Համազգայինի Բեյրութի հայագիտական բարձրագույն հիմնարկում, իսկ 1995-1996 թթ.՝ ԱՄՆ-ի Միչիգանի Դիզբորն համալսարանում։

1970-1971 թթ. Բաբկեն Հարությունյանը եղել է ԵՊՀ արտասահմանյան ուսանողների հետ աշխատանքների գծով դեկան, 1983-1985 թթ.՝ նույն բուհի կուսկոմիտեի քարտուղարի տեղակալ, 1985-1988 թթ.՝ «Երևանի համալսարան» հրատարակչության տնօրեն, 1993-2004 թթ.՝ ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, համատեղությամբ՝ 1997-2000 թթ.՝ ԵՊՀ Հայաստանին հարակից երկրների պատմության ամբիոնի վարիչ։

2003-2013 թթ.՝ ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի վարիչ, 2007-2008 թթ. վարել է ՀՀ ԳԱԱ-ի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնը։

Տարիներ շարունակ եղել է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտում գործող գիտական աստիճաններ շնորհող խորհրդի փոխնախագահ։

Հայ ժողովրդի հին և միջնադարյան պատմության ուսումնասիրության ասպարեզում լուրջ ներդրում են Բաբկեն Հարությունյանի՝ «Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների և Առաջավոր Ասիայի հնագույն պատմության մի քանի խնդիրների շուրջ (Ք.ա. VII-VI դարեր)», (1998թ.), «Աշխարհացոյց»-ը և «Չորս Հայքերի խնդիրը» (1997), «Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանման համակարգը ըստ «Աշխարհացոյց»-ի» (մաս Ա, 2001թ.) մենագրություններն ու այլ ուսումնասիրությունները։

Բաբկեն Հարությունյանի հեղինակությամբ լույս է տեսել «Հայաստանի պատմության ատլաս»-ը և «Հայաստանի ազգային ատլաս»-ը։ Նա նաև «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» եռալեզու ատլասի համահեղինակ է։

Բաբկեն Հարությունյանն արժանացել է Մովսես Խորենացու մեդալի և մի շարք այլ մեդալների։ 2009թ. նրան շնորհվել է ՀՀ գիտության վաստակավոր գործչի կոչում։ Գիտնականն արժանացել է Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության ու Ֆուլբրայթի հիմնադրամի թոշակներին, ընտրվել է Բնության և հասարակության մասին գիտությունների և «Արարատ» միջազգային ակադեմիաների անդամ։

Բաբկեն Հարությունյանը մահացել է 2013թ. փետրվարի 26-ին Երևանում։

Բաբկեն Հարությունյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Երևան քաղաքի Չարենցի փողոց հ.4 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել Երևանի պետական համալսարանի ռեկտորի կողմից։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԲԱԲԿԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Բաբկեն Հարությունյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԲԱԲԿԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Բաբկեն Հարությունյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ